ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն Ս. Ավանեսյան
«_____» _____2026թ.

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ–ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Հասարակագիտություն*

ԴԱՍԱՐԱՆ *7* ԿԻՍԱՄՅԱԿ *I, II* ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ *2026-2027* ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ *34* (տարեկան) *1* (շաբաթական)

ԴԱՍԱԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Հասարակագիտություն*

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ *Զանգակ* ՀԵՂԻՆԱԿ *Կարինե Հարությունյան, Հայկուհի Բարսեղյան, Նարեկ Գալստյան, Արաքս Մանուչարյան, Տարոն Սիմոնյան*

ՈՒՍՈՒՑԻՉ *Ռուզաննա Խաչատրյան*

Քննարկվել, հավանության է արժանացել _____
մեթոդմիավորման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____

Մեթոդմիավորման նախագահ _____ *Մերի Դանիելյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Տնօրենի տեղակալ _____ *Մերի Մկրտչյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

№	ԴԱՍԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ	ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ	ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	ԳՐՔԻ ԷՋԸ	ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ			ԺԱՄԿԵՏԸ
					ԸՆԴ	ՏԵՍ	ԳՈՐԾ	
ԹԵՄԱ 1	Մարդ-բնություն (3 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Ներկայացնել բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը օրինակների միջոցով: Բացատրել մարդու պահանջմունքները:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	1. Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում: Նկարագրի բնության և հասարակության միջև եղած փոխադարձ կապերը: Հ17 2. Նկարագրի մարդու պահանջմունքները: Հ17 3. Օրինակներով ներկայացնի մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան: Հ15 4. Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր: Հ11							
1	Մարդը որպես բնության մաս: Մարդու պահանջմունքները:	Նկարագրի բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը: Ներկայացնի մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա: Ներկայացնի մարդու գործունեության արդյունքում ձևավորված պահանջմունքները և կարողանա բացատրել պահանջմունք հասկացությունը:	Հիմնավորում է բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում, նկարագրում է մարդու պահանջմունքների տեսակներն ու դրանց բավարարման աղբյուրները:	4-9 10-14	1	0,5	0,5	
2	Մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան:	Ծանոթացնել մարդ-բնություն փոխհարաբերությունների պատմական փուլերին և բնության վրա մարդածին ազդեցության հետևանքներին:	Օրինակներով ներկայացնում է մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիան, գնահատում է էկոլոգիական հավասարակշռության դերը և առաջարկում ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:	15-19	1	0,5	0,5	
3	**Ամփոփում 1. (կարճ պատասխաններով հարցեր, քարտային աշխատանք)**	Կարճ պատասխաններով հարցերի և քարտային գործնական առաջադրանքների միջոցով ստուգել ու ամրապնդել «Մարդ-բնություն» թեմայից ձեռք բերված գիտելիքները:	Քարտային աշխատանքի ընթացքում դասակարգում է մարդու պահանջմունքները, պարզաբանում է բնության ու հասարակության փոխադարձ կապերը և արժանահավատորեն հիմնավորում իր պատասխանները:		**1**		**1**	
ԹԵՄԱ 2	Մարդ հասարակություն: (5 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Ներկայացնել մարդու և հասարակության փոխկապվածությունը, հասարակական մեծ և փոքր խմբերի ու շերտերի նմանություններն ու տարբերությունները:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	1. Մարդու էությունից բխեցնի խմբի և հասարակության անհրաժեշտությունը, արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը: Հ31 2. Տարբերակի հասարակության փոքր և մեծ խմբերը: Հ34 3. Ներկայացնի հասարակության սոցիալական կազմը: Հ23							
4	Հասարակական կյանքի առանձնահատկությունները:	Ծանոթացնել հասարակության էությանը, մարդու սոցիալական բնույթին և հանրային համակեցության անհրաժեշտությանը:	Բացատրում է հասարակական կյանքի ձևավորման պատճառները, բխեցնում է խմբային կյանքի անհրաժեշտությունը մարդու էությունից և հիմնավորում համակեցության կանոնների դերը:	20-22	1	0,5	0,5	
5	Հասարակական կյանքի առանձնահատկությունները:	Ուսումնասիրել հասարակական մեծ և փոքր խմբերի (ընտանիք,	Տարբերակում է հասարակության փոքր և մեծ խմբերը, համեմատում	22-25	1	0,5	0,5	

		համայնք, ընկերական շրջապատ) առանձնահատկություններն ու դրանցում մարդու դերը:	է դրանց գործառույթները, արտահայտում և պաշտպանում է սեփական դիրքորոշումը խմբային հարաբերությունների վերաբերյալ:					
6	Հասարակության սոցիալական կազմը:	Ծանոթացնել հասարակության սոցիալական կառուցվածքին, տարբեր սոցիալական խմբերի, շերտերի և դրանց փոխհարաբերություններին:	Ներկայացնում է հասարակության սոցիալական կազմը, դասակարգում է սոցիալական խմբերն ըստ տարբեր հատկանիշների և պարզաբանում դրանց դերը հասարակությունում:	26-29	1	0,5	0,5	
7	Հասարակության սոցիալական կազմը:	Ուսումնասիրել սոցիալական շերտավորման պատճառները, սոցիալական արդարության և հավասար հնարավորությունների ապահովման կարևորությունը:	Գիտի սոցիալական տարբերությունների առաջացման պատճառները, գնահատում է սոցիալական համերաշխության նշանակությունը և արժևորում հավասար հնարավորությունների ապահովումը:	29-33	1	0,5	0,5	
8	**Ամփոփում 2. (բանավոր հարցում)**	Բանավոր քննարկման և հարցման միջոցով ամփոփել ու ստուգել «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակություն» թեմայից սովորողների յուրացրած գիտելիքները:	Բանավոր հարցման ընթացքում ընդհանրացնում է թեմայի հիմնական դրույթները, արժանահավատորեն հիմնավորում է իր տեսակետը և դիրքորոշում արտահայտում հանրային հարաբերությունների շուրջ:		**1**		**1**	
ԹԵՄԱ 3	Մարդ- ճանաչողություն-վարքագիծ: (6 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Բացատրել ճանաչողության, սոցիալական հմտությունների, հույզերի, վարքագծի, արդյունավետ հաղորդակցման կարևորությունը մարդու կյանքում և օրինակների ու իրավիճակների վերլուծության միջոցով զարգացնել ինքնաճանաչողությունը և իրավիճակին համարժեք արձագանքելու հմտությունները:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	1. Ներկայացնի ճանաչողության և վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում: Հ31 2. Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը, կարևորի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, դրսևորի ակտիվ լսելու կարողություն: Հ25Ծանոթացնել աշխարհի և սեփական անձի ճանաչողության գործընթացին, զգայական ու տրամաբանական ճանաչողության ձևերին և դրանց ազդեցությանը մարդու վարքագծի վրա: 3. Վերլուծի սեփական հույզերը, մտքերը, իր ուժեղ և թույլ կողմերը, ներկայացնի հույզերի կառավարման հնարներ: Հ33							
9	Ճանաչողություն և վարքագիծ:	Ծանոթացնել աշխարհի և ինքնաճանաչողության գործընթացին, մարդու մտածողության, ճանաչողության և վարքագծի փոխկապվածությանը:	Բացատրում է ճանաչողության դերը մարդու կյանքում, նկարագրում է ճանաչողության հիմնական ձևերը (զգայություն, ընկալում, մտածողություն) և դրանց կապը մարդու վարքագծի հետ:	34-36	1	0,5	0,5	
10	Ճանաչողություն և վարքագիծ:	Ուսումնասիրել վարքագծի ձևավորման վրա ազդող գործոնները (արժեքներ, համոզմունքներ, էմոցիաներ) և սեփական վարքագիծը գնահատելու ու վերահսկելու մեխանիզմները:	Գիտի սեփական վարքագծի պատճառներն ու հետևանքները, դրսևորում է ինքնաճանաչման և սեփական էմոցիաներն ու վարքագիծը կառավարելու հմտություններ:	36-40	1	0,5	0,5	
11	Արդյունավետ հաղորդակցում:	Ծանոթացնել հաղորդակցման էությանը, տեսակներին (վերբալ նոչ վերբալ), արդյունավետ հաղորդակցման սկզբունքներին և	Բացատրում է արդյունավետ հաղորդակցման կարևորությունը, կիրառում է ակտիվ լսման ու փոխհամագործակցության	47-49	1	0,5	0,5	

		ակտիվ լսման հմտություններին:	հմտություններ և դրսևորում է հարգալից վերաբերմունք խոսակցի նկատմամբ:					
12	Արդյունավետ հաղորդակցում:	Ուսումնասիրել հաղորդակցման արգելքները, դրանց հաղթահարման ուղիները և դիմացինի տեսակետը հարգելու ու հիմնավորելու հմտությունները:	Կարողանում է վերլուծել հաղորդակցման ընթացքում առաջացող արգելքները, դրսևորում է դիմացինի տեսակետը հարգելու կուլտուրա և կիրառում է սեփական կարծիքն արգումենտացված հիմնավորելու ու հաղորդակցման խոչընդոտները հաղթահարելու հմտություններ:	50-55	1	0,5	0,5	
13	Հույզերի կառավարում:	Ծանոթացնել հիմնական հույզերին, դրանց արտահայտման ձևերին և ինքնակարգավորման ու հույզերի կառավարման արդյունավետ հնարներին:	Տարբերակում է հիմնական հույզերն ու դրանց արտահայտման ձևերը, բացատրում է հույզերի ազդեցությունը որոշումների կայացման վրա և կիրառում է ինքնակարգավորման ու հույզերի արդյունավետ կառավարման հնարներ:	41-46	1	0,5	0,5	
14	**Ամփոփում 3. (Գործնական աշխատանք)**	Գործնական աշխատանքի միջոցով ստուգել, նախորդ թեմաների ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքներն ու հասկացությունների տիրապետումը:	Կարողանում է դասակարգել հիմնական հասկացությունները, համադրում է իրավիճակներն ու վարքագծային դրսևորումները և ճշգրտորեն ներկայացնում ստացված արդյունքները:		**1**		**1**	
ԹԵՄԱ 4	Մարդ-բարոյականություն: (5 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Ներկայացնել բարոյական նորմերի անհրաժեշտությունը: Զարգացնել բարոյական դատողություններ անելու կարողություններ՝ որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	1. Մեկնաբանի բարոյականության հիմնական հասկացությունները: Հ30 2. Վերլուծի բարոյականության ոսկե կանոնը: Գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ: Հ30 3. Հիմնավորի բարոյական նորմերի անհրաժեշտությունը: Հետևի հասարակական համակեցության կանոններին և նորմերին, հասկանա դրանց կարևորությունը, դրսևորի հարգալից վարքագիծ և կարողանա լսել ու ընդունել ուրիշների տեսակետները: Հ22						
15	Բարոյական նորմերի նշանակությունը:	Ծանոթացնել բարոյականության էությանը, հասարակական կյանքում բարոյական նորմերի անհրաժեշտությանը և համակեցության կանոններին:	Բացատրում է բարոյականության էությունն ու դերը, նկարագրում է բարոյական նորմերի անհրաժեշտությունը հասարակական համակեցության և փոխհարաբերությունների կարգավորման գործում:	56-59	1	0,5	0,5	
16	Բարոյականության ոսկե կանոնը:	Ուսումնասիրել բարոյականության ոսկե կանոնի բովանդակությունը, ծագումնաբանությունը և արժանահավատ աղբյուրների հետ աշխատանքը:	Գիտի «Բարոյականության ոսկե կանոնի» բովանդակությունն ու պատմական ծագումը, կիրառում է այն իրավիճակների գնահատման համար և աշխատում է հավաստի աղբյուրների հետ:	59-61	1	0,5	0,5	
17	Բարոյականության հիմնական հասկացությունները:	Ծանոթացնել բարոյագիտական առանցքային հասկացություններին (բարի, չար, պարտք, պատիվ, խղճմտանք) և դրանց դրսևորումներին:	Տարբերակում է բարոյագիտական հիմնական հասկացությունները, բացատրում է դրանց իմաստը և գնահատում է սեփական ու այլոց արարքները այդ	62-63	1	0,5	0,5	

			հասկացությունների լույսի ներքո:					
18	Էգոիզմ և ալտրուիզմ	Ուսումնասիրել եսասիրության (էգոիզմ) և այլասիրության (ալտրուիզմ) էությունը, դրանց տարբերություններն ու ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա:	Համեմատում է էգոիզմի (եսասիրություն) և ալտրուիզմի (այլասիրություն) դրսևորումները, վեր է լուծում դրանց ազդեցությունը միջանձնային հարաբերությունների ու հասարակական համերաշխության վրա:	64-68	1	0,5	0,5	
19	**Ամփոփում 4. (բլից հարցեր)**	Բլից (արագ) հարցադրումների միջոցով ստուգել, ամրապնդել և ընդհանրացնել «Մարդ-բարոյականություն» թեմայից սովորողների ձեռք բերած գիտելիքները:	Բլից հարցադրումներին պատասխանելիս ընդհանրացնում է բարոյագիտական հասկացությունները, արժանահավատորեն հիմնավորում է իր պատասխանները և ցուցաբերում դիրքորոշում իրավիճակային հարցերում:	66-68	**1**		**1**	
ԹԵՄԱ 5	Մարդ- գեղացկություն: (4 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Զարգացնել գեղագիտական ճաշակ ու պատկերավոր խոսք՝ բնութագրելու գեղեցիկն ու տգեղը բնության, հասարակության և մշակույթի համատեքստում:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	1. Ներկայացնի «գեղեցիկ» հասկացությունը բնության, հասարակության և մշակույթի համատեքստում, դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ: Հ42 2. Մեկնաբանի պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում: Հ42							
20	Գաղափար գեղեցիկի մասին:	Սահմանել «գեղագիտական զգացմունք» հասկացությունը և ծանոթացնել հույն փիլիսոփաների հիմնական տեսակետներին գեղեցիկի մասին: Վերլուծել և համեմատել տարբեր դարաշրջանների և մշակույթների գեղեցկության իդեալներն ու չափանիշները: Գնահատել ներքին գեղեցկության և բարոյական արարքների կարևորությունը: Զարգացնել սեփական կարծիքը հիմնավորելու հմտությունը՝ քննարկելով գեղեցիկի սուբյեկտիվ բնույթը և դրա փոփոխությունները ժամանակակից աշխարհում:	Սահմանում և բացատրում է, թե ինչ է գեղագիտական զգացմունքը և ինչու է գեղեցիկի ընկալումը յուրաքանչյուր մարդու համար անհատական ու յուրահատուկ: Տարբերակում և ներկայացնում է հույն մեծ փիլիսոփաների (Սոկրատես, Պլատոն, Արիստոտել) հիմնական գաղափարները գեղեցիկի, օգտակարության և ներդաշնակության մասին: Համեմատում է տարբեր ժամանակաշրջանների և ժողովուրդների գեղեցկության իդեալները՝ հասկանալով, որ չափանիշները քարացած չեն և փոփոխվում են ժամանակի ընթացքում:	69-73	1	0,5	0,5	
21	Մեզ շրջապատող միջավայրի գեղագի տական ընկալումը:	Ուսումնասիրել բնության և հասարակական միջավայրի գեղագիտական ընկալումը, միջավայրի պահպանման գործում անհատական պատասխանատվությունը:	Բնութագրում է շրջապատող միջավայրի գեղագիտական կողմերը, հիմնավորում է պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում և առաջարկում խնամքի քայլեր:	74-75	1	0,5	0,5	
22	Գեղեցիկն արվեստում:	Ծանոթացնել արվեստի տարբեր ճյուղերում (երաժշտություն, կերպարվեստ, գրականություն)	Դրսևորում է մշակութային ընկալման ու արժևորման կարողություններ, համեմատում է	75-78	1	0,5	0,5	

		գեղեցիկի արտահայտման ձևերին և մշակութային ժառանգության արժևորմանը:	արվեստի տարբեր գործերում գեղեցիկի դրսևորումները և արտահայտում պատկերավոր խոսք:					
23	**Ամփոփում 5. (քարտային աշխատանք)**	Անհատականացված քարտային առաջադրանքների միջոցով ստուգել և ամրապնդել աշակերտների ձեռք բերած տեսական գիտելիքները, զարգացնել աղբյուրների հետ աշխատելու և վերլուծական հմտությունները:	Ինքնուրույն լրացնում է քարտային առաջադրանքները, ճիշտ կիրառում է պատմական ու հասարակագիտական հասկացությունները, վերլուծում է քարտերում ներառված աղբյուրներն ու հարցադրումները և հիմնավորված ներկայացնում է իր պատասխանները:		**1**		**1**	
ԹԵՄԱ 6	Մարդ-իրավունք: (4 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Ներկայացնել իրավունքի կարևորությունը մարդկանց համակեցության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և նրանց վարքագիծը կարգավորելու գործում: Զարգացնել դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ ու վերաբերմունք:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	1. Բացատրի իրավունք հասկացության իմաստը և դերը մարդու կյանքում: Հ39 2. Տարբերակի իրավական և բարոյական նորմերը, բացատրի դրանց կարևորությունը, ցուցաբերի պատասխանատու վարքագիծ: Հ22 3. Ներկայացնի իրավունքի աղբյուրները: Հ22							
24	Ինչ է իրավունքը:	Ծանոթացնել իրավունքի էությանը, դրանով կարգավորվող հասարակական հարաբերություններին և իրավունքի դերին հասարակական կարգուկանոնի ապահովման գործում:	Բացատրում է իրավունքի հասկացությունն ու էությունը, նկարագրում է իրավունքի հիմնական գործառույթները և հիմնավորում է դրա անհրաժեշտությունը հասարակական կյանքի կարգավորման համար:	79-82	1	0,5	0,5	
25	Իրավական և բարոյական նորմեր:	Ուսումնասիրել իրավական և բարոյական նորմերի ընդհանրություններն ու տարբերությունները, դրանց փոխազդեցությունը և դերը հասարակական վարքագծի կարգավորման մեջ:	Սահմանում է իրավունքը որպես պետության կողմից սահմանված և պաշտոնական փաստաթղթերում ամրագրված համապարտադիր վարքագծի կանոնների համակցություն: Թվարկում իրավունքի հիմնական հատկանիշները՝ պետական հարկադրանք, համապարտադիրություն և գրավոր ձև (օրենքներ, որոշումներ): Կարողանում է համեմատել և տարբերակել իրավական նորմը բարոյական և կրոնական նորմերից՝ բերելով համապատասխան օրինակներ: Գիտի իրավունքի առաջացման անհրաժեշտությունը հասարակական հարաբերությունների բարդացման և մարդկանց շահերի բազմազանության համատեքստում:	82-86	1	0,5	0,5	
26	Իրավունքի աղբյուրներ:	Ծանոթացնել իրավունքի աղբյուրի հասկացությանը, դրա	Մեկնաբանում է, թե ինչու են որոշ իրավունքներ կոչվում «հիմնարար»	87-91	1	0,5	0,5	

		հիմնական տեսակներին (իրավական ակտեր, իրավական սովորույթ, դատական նախադեպ) և Սահմանադրության՝ որպես պետության մայր օրենքի դերին:	և բացատրել իրավահավասարության ու հակախտրականության սկզբունքների էությունը: Համեմատում է իրավական նորմը և սովորույթը՝ տարբերակելով դրանց ազդեցությունը հասարակական կարգի վրա, և բացահայտել պատճառահետևանքային կապը մարդու արժանապատվության և իրավունքների միջև: Հիմնավորում է իրավունքի կարևորությունը հասարակության մեջ և փաստարկել սեփական տեսակետը մարդու իրավունքների խախտման կամ պաշտպանության որևէ իրավիճակային խնդրի վերաբերյալ:Դասակարգում տրված կանոնները իրավական նորմերի և բարոյական իրավունքների, ինչպես նաև բերել իրական կյանքից օրինակներ, թե որտեղ է դրսևորվում մարդու իրավունքների պաշտպանությունը:					
27	**Ամփոփում 6. (բանավոր հարցում)**	Բանավոր հարցման և քննարկումների միջոցով ստուգել, ընդհանրացնել և ամրապնդել «Մարդ-իրավունք» թեմայից սովորողների ձեռք բերած տեսական գիտելիքներն ու վերլուծական հմտությունները:	Բանավոր հարցման ընթացքում մեկնաբանում է իրավունքի և նորմերի էությունը, հիմնավորում է իր տեսակետը փաստարկներով և գնահատում իրավական նորմերի դերը համակեցության մեջ:		**1**		**1**	
ԹԵՄԱ 7	Մարդ- տնտեսություն: (4 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Բացատրել, թե ինչպես կարելի է համադրել մեր և այլոց կարիքները, ցանկությունները և պահանջմունքները առկա ռեսուրսների հետ, ինչպես նաև մեկնաբանել սակավության հիմնախնդիրը: Նկարագրել խնայողությունների դերը ներկայում և ապագայում:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	1. Նկարագրի բնության, բնակչության և տնտեսության միջև եղած փոխադարձ կապերը: Հ17 2. Լսելով հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից: Հ17 3. Բացատրի ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը: Հ 20							
28	Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր:	Ծանոթացնել ռեսուրսների սակավության (սահմանափակության) հիմնախնդրին, տնտեսական ընտրության անհրաժեշտությանը և ընտրության այլընտրանքային ծախքի հայեցակարգին:Ուսումնասիրել ռեսուրսների սահմանափակության և պահանջմունքների անսահմանափակության իրողությունը, տնտեսական ճիշտ որոշումներ կայացնելու	Բացատրում է սակավության էությունը տնտեսագիտության մեջ, վերլուծում է տնտեսական որոշումների կայացման ընթացքը սահմանափակ ռեսուրսների պայմաններում և գնահատում է այլընտրանքային ծախքը:	92-96	1	0,5	0,5	

		հմտությունները:						
29	Մեր պահանջմունքներ,կարիքնեն ու ցանկություններ:	Ուսումնասիրել կարիքների, պահանջմունքների և ցանկությունների էությունը, դրանց փոխկապակցվածությունը, ինչպես նաև առաջնահերթությունների սահմանման կարևորությունը:	Տարբերակում է անհրաժեշտ կարիքներն ու ցանկությունները, դասակարգում է պահանջմունքները և կիրառում է առաջնահերթություններ սահմանելու հմտություններ անձնական որոշումներ կայացնելիս:	97-99	1	0,5	0,5	
30	Ի՞նչ է խնայողությունը:	Ծանոթացնել խնայողության էությանը, դրա տնտեսական ու անձնական նշանակությանը և անձնական ու ընտանեկան բյուջեի արդյունավետ պլանավորման սկզբունքներին:	Բացատրում է խնայողության դերը ֆինանսական կայունության ապահովման գործում, առաջարկում է խնայողության արդյունավետ ռազմավարություններ և կազմում է անձնական կամ ընտանեկան բյուջեի պլան:	100-108	1	0,5	0,5	
31	**Ամփոփում 7. (բանավոր հարցում)**	Բանավոր հարցման և քննարկման միջոցով ստուգել, ընդհանրացնել և ամրապնդել «Մարդ-տնտեսություն» թեմայից սովորողների ձեռք բերած տնտեսագիտական գիտելիքները:	Բանավոր հարցման ընթացքում ընդհանրացնում է տնտեսական հիմնական հասկացությունները, արժանահավատորեն հիմնավորում է իր պատասխանները և ցուցաբերում գիտակից սպառողի դիրքորոշում:		**1**		**1**	
ԹԵՄԱ 8	Մարդ-քաղաքականություն: (3 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Բացատրել քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում և անհատի կյանքում, օրինակների միջոցով ցույց տալ մարդու դերը քաղաքականության մեջ:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	1. Նկարագրի քաղաքականության կարևորությունը մարդու կյանքում: Հ23 2. Ցույց տա քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը: Ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները, լսի և հաշվի առնի տարբեր կարծիքներ, համադրի տեսակետները և մասնակցի կառուցողական քննարկումների: Հ23							
32	Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում:	Ծանոթացնել քաղաքականության էությանը, դրանով կարգավորվող հասարակական հարաբերություններին և քաղաքականության դերին հասարակական կյանքի կազմակերպման գործում:	Բացատրում է «քաղաքականություն» հասկացությունը և դրա գործառույթները, նկարագրում է քաղաքականության դերը հասարակական կարգի ապահովման և տարբեր շահերի համադրման գործում:	109-113	1	0,5	0,5	
33	Մարդը որպես քաղաքական էակ:	Ուսումնասիրել մարդու քաղաքական դերը, քաղաքացիական մասնակցության ձևերն ու նշանակությունը և քաղաքական գիտակցության ձևավորման ընթացքը:	Բացատրում է «մարդը որպես քաղաքական էակ» գաղափարի իմաստը, կարողանում է վերլուծել քաղաքացիական մասնակցության հնարավորություններն ու ձևերը և հիմնավորում է պատասխանատու քաղաքացու դերը հասարակությունում:	114-118	1	0,5	0,5	
34	**Ամփոփում 8. (Գործնական աշխատանք)**	Գործնական աշխատանքի միջոցով ամփոփել ուսումնասիրված թեմաների բովանդակության յուրացումն ու	Գործնական աշխատանքի միջոցով գնահատել աշակերտների գիտելիքները:		**1**		**1**	

		ստացած գիտելիքները:						
				ԸՆԴԱՄԵՆԸ	***34***	***13***	***21***	